

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:

1

Որո՞նք են համագորային մարտի հիմնական տեսակները ըստ նպատակին հասնելու եղանակի:

1. Պաշտպանություն, հարձակում, նահանջ:
2. Պաշտպանություն, հարձակում:
3. Պաշտպանություն, հարձակում, հանդիպական մարտ:
4. Պաշտպանություն, հարձակում, շրջափակում:

2

Որո՞նք են ինժեներական արգելափակոցների հիմնական տեսակները ըստ գործողության բնույթի:

1. Ականապայթուցիկ, ոչ պայթուցիկ, համակցված:
2. Ականապայթուցիկ, ոչ պայթուցիկ, պայթուցավտանգ:
3. Ականապայթուցիկ, պայթուցիկ, ոչ պայթուցիկ:
4. Հակատանկային, հակահետևակային, ոչ պայթուցիկ:

3

Քա՞նի քայլ է կատարում 1րոպեում մարտի դաշտում զինվորը արագ քայլի ժամանակ:

1. 100-120 քայլ:
2. 110-120 քայլ:
3. 120-130 քայլ:
4. 130-140 քայլ:

4

Նշվածներից ո՞րը հետախուզության տեսակ չէ:

1. Դիտարկում:
2. Քողարկում:
3. Գաղտնալսում:
4. Որոնում:

5

Ի՞նչ է պարզում զինվորը որպես դետրային գործելու առաջադրանք ստանալով:

1. Տեղեկությունները հակառակորդի մասին, իր առաջադրանքը և խնդիրները, գործողությունների կարգը հակառակորդին հանդիպելիս, շարժման ուղղությունն ու արագությունը, ազդարարաման, գործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հետախուզությունն սկսելու ժամանակը:
2. Տեղեկությունները հակառակորդի մասին, ջոկի և իր խնդիրը, շարժման տեմպը, ազդարարաման, կառավարման գործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, դիտարկման արդյունքների զեկուցման կարգը, հետախուզության վարման ժամկետը:
3. Տեղեկությունները հակառակորդի մասին, ջոկի և իր խնդիրը, շարժման ուղղությունն ու արագությունը, դիտարկման հատվածը, գործողությունների կարգը հակառակորդին հանդիպելիս, դիտարկման արդյունքների զեկուցման կարգը, ազդարարաման, կառավարման գործակցության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հետախուզությունն սկսելու ժամանակը:
4. Տեղեկությունները հակառակորդի մասին, ջոկի և իր խնդիրը, շարժման ուղղությունն ու արագությունը, գործողությունների կարգը հակառակորդին հանդիպելիս, կառավարման գործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հետախուզության վարման ժամկետը:

6

Ի՞նչից կախված չէ մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունները:

1. Մարտական պատրաստականության մակարդակից:
2. Դիրքերը փոխելու ունակությունից:
3. Անձնակազմի բարոյաքաղաքական վիճակից:
4. Հրամանատարի ղեկավարելու ունակությունից:

7

Որքա՞ն է լիցքավորված Ֆ-1 ձեռքի նռնակի զանգվածը գրամներով:

1. 600գ
2. 450գ
3. 500գ
4. 550գ

8 Որքա՞ն է <<ԱԿ-74>> ավտոմատի արդյունավետ կրակի հեռավորությունը:

1. 1000 մ
2. 500 մ
3. 400մ
4. 600մ

9 Ո՞ր դեպքում անմիջապես չի դադարեցվում կրակը:

1. Թիրախային դաշտում մարդկանց հայտնվելու դեպքում:
2. Հրամանատարական կետի վրա սպիտակ դրոշի բարձրացման ժամանակ:
3. Հրամանատարական կետի վրա կարմիր դրոշի բարձրացման ժամանակ:
4. Թիրախային դաշտում կենդանիների հայտնվելու դեպքում:

10 Ինչքա՞ն է ավտոմատի հավաքումը ոչ լրիվ քանդելուց հետո:

| <u>գերազանց</u> | <u>լավ</u> | <u>բավարար</u> |
|-----------------|------------|----------------|
| 1. 25 վրկ | 27 վրկ | 32 վրկ |
| 2. 21 վրկ | 25 վրկ | 27 վրկ |
| 3. 19 վրկ | 21 վրկ | 25 վրկ |
| 4. 15 վրկ | 17 վրկ | 21 վրկ |

11 Ո՞րը վաշտի հերթապահի ծառայողական փաստաթուղթ չէ:

1. Մաքրելու համար վաշտին ամրակցված տարածքի գծապատկեր:
2. Առավոտյան մարմնամարզության համար սահմանված համազգեստի նմուշներ:
3. Միանգամյա անցաթղթերի հաշվառման գիրք:
4. Մարտական պատրաստության պարապմունքների դասացուցակ:

12 Վաշտում ո՞ր դեպքում է տրվում «Զգաստ» հրաման:

1. Անմիջական պետերի ժամանման դեպքում:
2. Ուղղակի պետերի ժամանման դեպքում:
3. Ուղղակի պետերի՝ սկսած վաշտի հրամանատարից ու բարձր և զորամասի հերթապահի ժամանման դեպքում:
4. Միայն զորամասի հրամանատարի ժամանման դեպքում:

13

Ո՞վ ժամապահին հերթափոխելու իրավունք չունի:

1. Պահակապետը:
2. Դասակի հրամանատարը:
3. Պահակապետի օգնականը:
4. Իր պահակադիրը:

14

Ի՞նչ է արգելվում ժամապահին:

1. Քայլել:
2. Նստել:
3. Ջննել:
4. Հսկել:

15

Նշվածներից ո՞րը չի համարվում զինծառայության պատասխանատվության տեսակ:

1. Նյութական:
2. Քաղաքացիաիրավական:
3. Կարգապահական:
4. Վարչաիրավական:

16

Ու՞մ է կանչում ժամապահը հանկարծակի հիվանդանալու /վիրավորվելու/ դեպքում:

1. Պահակադիրին՝ շարունակելով պահակային ծառայությունը:
2. Իր անմիջական հրամանատարին՝ շարունակելով պահակային ծառայությունը:
3. Հերթապահ բժշկին /բուժակին/՝ շարունակելով պահակային ծառայությունը:
4. Գնդի հերթապահին՝ շարունակելով պահակային ծառայությունը:

17

Ո՞րն է շարքի լայնությունը:

1. Շարքի թևերի միջև եղած հեռավորությունը:
2. Շարքերի միջև եղած հեռավորությունների և շարքերի ճակատային գծի ընդհանուր երկարությունը:
3. Շարքերի ընդհանուր երկարությունը:
4. Շարքերի մինչև խորքը եղած հեռավորությունը:

Ի՞նչ է պարտավոր ռազմագերին:

1. Չենթարկվել գերության մեջ պահող պետության զինված ուժերում գործող օրենքներին, կանոնդրություններին, հրամաններին:
2. Ենթարկվել գերության մեջ պահող պետության զինված ուժերում գործող օրենքներին, կանոնդրություններին, հրամաններին և այլ պարտադիր հրահանգներին:
3. Ենթարկվել գերության մեջ պահող պետության զինված ուժերում գործող օրենքներին, կանոնդրություններին, հրամաններին և հրահանգներին ըստ ցանկության:
4. Ենթարկվել գերության մեջ պահող պետության զինված ուժերում գործող օրենքներին, կանոնդրություններին, հրամաններին և հրահանգներին ըստ իր ունեցած պաշտոնի և կոչման:

Ովքե՞ր են համարվում վարձկաններ:

1. Տվյալ պետության քաղաքացիներ են, որոնք անմիջականորեն մասնակցում են մարտական գործողություններին՝ անձնական օգուտ քաղելու նպատակով:
2. Անձինք, որոնք հատուկ հավաքվել և անմիջականորեն մասնակցում են մարտական գործողություններին՝ անձնական օգուտ քաղելու նպատակով:
3. Հակառակորդ պետության քաղաքացիներ են, որոնք հատուկ հավաքվել և անմիջականորեն մասնակցում են մարտական գործողություններին՝ անձնական օգուտ քաղելու նպատակով:
4. Հակառակորդ պետության հսկողության տակ գտնվող տարածքում մշտապես բնակվող անձինք են, որոնք մասնակցում են մարտական գործողություններին՝ վարձատրություն ստանալու ակնկալիքով:

Ովքե՞ր են համարվում կոմբատանտներ (մարտիկներ):

1. Միջազգային զինված ընդհարման մեջ գտնվող երկրի զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք են և ռազմաբժշկական անձնակազմը:
2. Միջազգային զինված ընդհարման մեջ գտնվող երկրի զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք են և հոգևոր անձնակազմը:
3. Միջազգային զինված ընդհարման մեջ գտնվող երկրի զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք են և խաղաղ բնակչությունը:
4. Միջազգային զինված ընդհարման մեջ գտնվող երկրի զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք են:

21

Քա՞նի հայորդի է մասնակցել Հայրենական պատերազմին:

1. 500 հազար հայորդիներ:
2. 600 հազար հայորդիներ:
3. 400 հազար հայորդիներ:
4. 700 հազար հայորդիներ:

22

Նշվածներից ո՞րն է ՀՀ պետական խորհրդանիշ:

1. ՀՀ զինված ուժերի զինանշանը:
2. Ազգային ժողովը:
3. ՀՀ Կառավարությունը:
4. ՀՀ պետական օրհներգը:

23

Ե՞րբ է տեղի է ունեցել Ներսեհապատի ճակատամարտը:

1. 282թ.
2. 542թ.
3. 482թ.
4. 672թ.

24

Ե՞րբ է տեղի է ունեցել Ավարայրի ճակատամարտը:

1. 541թ.
2. 451թ.
3. 481թ.
4. 571թ.

25

Ինչպե՞ս է կատարվում զարկերակային արյունահոսության ժամանակավոր դադարեցումը լարանի /ժգուտի/ օգնությամբ:

1. Լարանը դրվում է վերքից անմիջապես ներքև:
2. Լարանը դրվում է վերքից վեր՝ գույգ ոսկրի վրա:
3. Լարանը դրվում է վերքից անմիջապես վեր:
4. Լարանը դնել վերքից վեր՝ կենտ ոսկրի վրա:

26

Որո՞նք են ախտահանման տեսակները:

1. Վարակագրերծում, կանխարգելիչ ախտահանում, եզրափակիչ ախտահանում:
2. Ընթացիկ ախտահանում, կանխարգելիչ ախտահանում, եզրափակիչ ախտահանում:
3. Կենսաբանական, ֆիզիկական, քիմիական:
4. Վարակագրերծում, միջատների ոչնչացում, կրծողների ոչնչացում:

27

Ցրտահարության ի՞նչ աստիճաններ կան:

1. Թեթև, միջին և ծանր աստիճանի:
2. 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի:
3. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանի:
4. Ընդհանուր, մակերեսային և խորքային:

28

Որ՞ը մարտական գործողությունների ժամանակ առաջին բուժօգնության խնդիր չէ:

1. Ապահովել տուժածի արագ տեղափոխումը մոտակա բուժկետ:
2. Գնահատել դեպքի վայրը և յուրաքանչյուր տուժածի վիճակը:
3. Դադարեցնել վնասող գործոնի հետագա ազդեցությունը:
4. Գրանցել հիվանդների գրանցման մատյանում:

29

Ո՞րն է կոչվում մազնիսական ազիմուտ:

1. Մազնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և մինչև նշանակետը ընկած հորիզոնական անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության):
2. Աշխարհագրական միջօրեականի հյուսիսային ուղղության և մինչև նշանակետը ընկած հորիզոնական անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության):
3. Մազնիսական սլաքի հարավային ուղղության և մինչև նշանակետը ընկած հարթ անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության):
4. Մազնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և մինչև նշանակետը ընկած դիրեկցիոն անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության):

30 Եթե ծառի կոճղի տարեկան աճի օղակները իրարից մեծ հեռավորության վրա են գտնվում, ապա դրանք հորիզոնի ո՞ր կողմն են ցույց տալիս:

1. Հյուսիսային կողմը:
2. Հարավային կողմը:
3. Արևելյան կողմը:
4. Արևմտյան կողմը:

31 Եթե կան հասունացած պտուղներ և մրգեր, ապա դրանք հորիզոնի ո՞ր կողմն են ցույց տալիս:

1. Հարավային կողմը:
2. Հյուսիսային կողմը:
3. Արևելյան կողմը:
4. Արևմտյան կողմը:

32 Որո՞նք են կենսաբանական զենքի <<զինամթերք>> հանդիսանում:

1. Մանրէները,, վիրուսները, սպորները, ռիկետսիաները:
2. Մանրէները, վիրուսները, սնկերը, սպորները, բորաքսը:
3. Մանրէները,, վիրուսները, թթուները, սուլեման, ռիկետսիաները:
4. Մանրէները, վիրուսները, սնկերը, ռիկետսիաները:

33 Որո՞նք են տեխնաճին բնույթի արտակարգ իրավիճակները:

1. Հրդեհներ, պայթյուններ,վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կենսապահովման կոմունալ համակարգերում, կենցաղային թունավորումներ:
2. Հրդեհներ և պայթյուններ,վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կենսապահովման կոմունալ համակարգերում, հիդրոդինամիկական վթարներ, շենքերի և կառուցվածքների հանկարծակի փլուզումներ:
3. Հրդեհներ, պայթյուններ,վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կոյուղու համակարգերում, հիդրոտերկրաբանական վթարներ, փլուզումներ, ավիավթարներ:
4. Հրդեհներ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, հիդրոդինամիկական վթարներ, հիդրոտերկրաբանական վթարներ:

34

Ո՞րն է կոչվում պայթյուն:

1. Մեծ քանակությամբ էներգիայի անջատումն է որոշակի ծավալում՝ կարճատև ժամանակահատվածում:
2. Մեծ քանակությամբ էներգիայի տարածումն է ամբողջ ծավալով՝ կարճատև ժամանակահատվածում:
3. Մեծ քանակությամբ էներգիայի անջատումն է սահմանափակ ծավալում՝ կարճատև ժամանակահատվածում:
4. Փոքր քանակությամբ էներգիայի անջատումն է սահմանափակ ծավալում:

35

Քա՞նի անգամ կարող են նվազեցնել հարվածային ալիքի, լուսային ճառագայթման ազդեցությունը պարզագույն թաքստոցները՝ փակ ճեղքերը:

1. 2,5-3 անգամ:
2. 5-6անգամ:
3. 7-8 անգամ:
4. 10-12 անգամ:

36

Քա՞նի տարհանման տեսակ կա:

1. Ընդհանուր և անհատական:
2. Ընդհանուր և մասնակի:
3. Արագընթաց հեռացում և լքում:
4. Արագընթաց հեռացում և դուրս բերում:

37

Որոշել քանու ճշգրտումը, եթե քամին ձախ կողային է և ուժգին: Նշանակետը գտնվում է 400 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿՁԱ ավտոմատից:

1. 2 թիրախ դեպի ձախ:
2. 2 թիրախ դեպի աջ:
3. 4 թիրախ դեպի աջ:
4. 4 թիրախ դեպի ձախ:

38

Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին աջ կողային է և չափավոր:
Նշանակետը գտնվում է 600 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿԱ-74 ավտոմատից:

1. 2 թիրախ դեպի ձախ:
2. 4 թիրախ դեպի աջ:
3. 2 թիրախ դեպի աջ:
4. 4 թիրախ դեպի ձախ:

39

Որոշել մինչև նշանակետը եղած հեռավորությունը, եթե նշանակետը 2 մ բարձրությամբ գրահամեքենա է և փակվում է ճկույթով:

1. 100 մ
2. 90 մ
3. 80 մ
4. 120 մ

40

Որոշել նշանակետի բարձրությունը, եթե այն երևում է հեռադիտակի սանդղակի 5 փոքր բաժանքներով և գտնվում է 800 մ հեռավորության վրա:

1. 18 մ
2. 20 մ
3. 16 մ
4. 22 մ

41

Նշանակետի բարձրությունը 60 սմ է, այն գտնվում է 300 մ հեռավորության վրա: Որոշել անկյունային մեծությունը:

1. $U = 0-02$
2. $U = 0-05$
3. $U = 0-20$
4. $U = 0-10$

42

1:50000 մասշտաբի քարտեզի վրա չափակարկինով չափվել է 10 սմ, իսկ կուրվիմետրով նույն հատվածի երթուղին՝ 13 սմ: Որոշել ուղիղ գծով և իրական երթուղով հեռավորությունները մետրերով և դրանց տարբերությունը:

1. 1500 մ, 1600 մ, 100 մ
2. 15500 մ, 20000 մ, 4500 մ
3. 5000 մ, 6500 մ, 1500 մ
4. 6500 մ, 7500 մ, 1000 մ

43

1:200000 մասշտաբի քարտեզի վրա չափակարկինով չափվել է 5 սմ, իսկ կուրվիմետրով նույն հատվածի երթուղին՝ 8 սմ: Որոշել ուղիղ գծով և իրական երթուղով հեռավորությունները մետրերով և դրանց տարբերությունը:

1. 20000 մ, 80000 մ, 60000 մ
2. 10000 մ, 16000 մ, 6000 մ
3. 5000 մ, 18000 մ, 13000 մ
4. 50000 մ, 80000 մ, 30000 մ

44

Կայծակի փայլատակումից հետո, որոտի ձայնը դիտորդը լսեց 5 վրկ հետո: Որոշել կայծակի հեռավորությունը դիտորդից:

1. 2000 մ
2. 1600 մ
3. 2500 մ
4. 1650 մ

45

Մարդու հասակը 1,80 մ է: Որոշել նրա քայլի երկարությունը:

1. $\tau = 0,80$ մ
2. $\tau = 0,78$ մ
3. $\tau = 0,82$ մ
4. $\tau = 0,84$ մ

46

Հաշվել հակադարձ ազիմուտները, եթե մագնիսական ազիմուտները տրված են՝ 20° , 265° :

1. 200° , 85°
2. 110° , 135°
3. 95° , 265°
4. 175° , 185°

47

Միմյանցից 15 մ հեռավորության վրա գտնվող 2 հեռագրասյուները ծածկվում են քանոնի 4 մմ բաժանքով: Որոշել հեռագրասյուների հեռավորությունը դիտորդից:

1. 1725 մ
2. 2535 մ
3. 1875 մ
4. 1565 մ

48

Համապատասխանեցնել հայկական կամավորական ջոկատները՝
հրամանատարներին:

- | | |
|-------------------------|---------------|
| 1. Համազասպ Սրվանձույան | ա/ 1-ին ջոկատ |
| 2. Անդրանիկ Օզանյան | բ/ 2-րդ ջոկատ |
| 3. Դրաստամատ Կանայան | գ/ 3-րդ ջոկատ |
| 4. Արշակ Գաֆավյան | դ/ 4-րդ ջոկատ |

1. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
4. 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

49

Համապատասխանացնել տեղանքի բնութագրերով հորիզոնի կողմերը:

- | | |
|----------------------|-------------------|
| 1. Հարավային կողմը | ա/ մամռապատ քարեր |
| 2. Հյուսիսային կողմը | բ/ մրջնաբներ |
| 3. Արևմտյան կողմը | գ/ եկեղեցու խորան |
| 4. Արևելյան կողմը | դ/ եկեղեցու մուտք |

1. 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

50

Համապատասխանացնել մանրէաբանական զենքի մանրէների հարուցած
հիվանդությունների տեսակները:

- | | |
|-----------------|---------------|
| 1. Մանրէները | ա/ կարդիոզ |
| 2. Վիրուսները | բ/ բժավոր տիֆ |
| 3. Ռիկետսիաները | գ/ սև ծաղիկ |
| 4. Սնկերը | դ/ ժանտախտ |

1. 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ